

# Յաղթանակ Victoire

HAGHTANAG  
LA VICTOIRE  
2 mai 2009,  
No 6 - Թիւ 6  
ՅԱՂԹԱՆԱԿ  
2 Մայիս 2009,

ԴԷՊԻ ՅԱՂԹԱՆԱԿ—TEBI HAGHTANAG—périodique— bulletin d'information

ԱՊՐԻԼ 22, 2009 կամ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՅԵՏԱՑԳՈՒՄ

Վերջերս, ականատես եղանք հետաքրքրական բեմադրութեան մը : Թատերախաղ մը երեք արարով եւ երեք գլխաւոր դերերով :

Առաջին դերասանը՝ Պարաք Հ. Օպաման է որ կը խաղայ Ամերիկեան Միացեալ Նահանգներու դերը : Երկրորդը՝ Թուրքիոյ պետութիւն-խորհրդարան-իշխանութիւն դերն է, որ վերցուցած է Ալի Պապանանը : Երրորդը՝ Հայ Ազգի դերն է որ կը խաղայ Էդուարդ Նալպանտեանը :

Վարագոյրը բացուեցաւ եւ մենք գմեզ դեմ յանդիման գտանք կացութեան մը որ ինքնախաբեութեան զագաթնակետն է : Բեմը տակաւին մութ է : Պատմիչին ձայնը կը սկսի լսուիլ, «Օպաման պիտի երթայ Թուրքիայ, թուրքին պիտի ստիպէ Հայոց Ցեղասպանութեան հանաչումը, ետքը պիտի վերադառնայ Ուշինկթոն եւ հոն իր նախնի մէջ պիտի արտասանէ, «Ցեղասպանութիւն» բառը, որմէ խուսափեցան իր նախորդները : Հայ ազգը պիտի հրեւուի եւ իրեն եղած խոստումները պիտի յարգուին »:

Պատմիչին ձայնը լռեց :

Առաջին արար : Բեմահարթակին վրայ կայ կարմիր գոյնով եւ կեդրոնին ներմակ խաչով ազգային դրոշմը եւ կը տեղափոխուինք Զուիցերիայ : Լինի մը ափին կը խաղան խարտեաշ հեղվեթ մը, հսկայ թուրք մը եւ զանազան հայ մը : Լինին միւս ափին իշխող լեռան զագաթէն այս խաղին կը հետեւի Սամ հօրեղբայրը իր երկար եւ աստղապատ գլխարկով : Զարոտուք, լաց, հրեւուանք, վագվոտուք եւ վերջապէս քծնանք : Երեքը կը բաժնուին ուրախութեամբ : Իսկ լեռան զագաթը նստողը կը հեռանայ գոհունակութեամբ : Վարագոյր :

Երկրորդ արար : Մթութեան մէջ կը լսուին բրքերէն երգեր : Լոռութիւն : Պապանան կ'ըսէ, « ... սահման ... դարաբաղ ... կարս ... պատմաբան ... սպանդ ... նախապայման ... համաձայնութիւն ... » : Լոյս : Բեմահարթակը վերածուած է դահլիճի մը : Կան նստարաններ : Կան անոնց ետին կանքնած անձեր : Ուրիշներ նստած : Բոլորն ալ ուշադրութեամբ կը հետեւին արիւնաթաթախ եւ կեդրոնին սպիտակ մահիկ ու սպիտակ աստղով ազգայնական դրոշին ներքեւ կանգնած թխամորթ եւ երկարհասակ անձի մը նաոին : Կը գտնուինք Թուրքիոյ խորհրդարանին մէջ : Ուշինկթոնէն Օպամա կ'ըսէ, « ... չենք կրնար մոռնալ ... Մեծ Եղեռն ... Զուիցերիոյ մէջ ... հայ եւ թուրք երկխօսութիւն ... » : Վարագոյր :

Երրորդ արար : Շէկ, Խաժ ու Միրանագոյն դրոշներ բեմահարթակին վրայ : Յստակ է, հայոց աշխարհն ենք : Կայ հրեւուանք ու տխուրներ : Կայ ծափ ու լացողներ : Կայ կենաց ու հեծեծողներ : Կայ խրախնանք ու կասկածամիտներ : Կայ հաւատք ու խաբուածներ : Հայոց աշխարհը կիսուած է : Բայց ինչո՞ւ : Նալպանտեան կը հերքէ, « ... ստորագրութիւն չիկայ ... նախապայման չիկայ ... գիշում չիկայ ... » : Վարագոյր :

Թատերախաղը վերջացաւ բայց այս անգամ դերասանները ծափող չունեցան : Հայ Ազգը կը գտնուի շփոթ վիճակի մը մէջ : Արդեօ՞ք սահմանի մը բացման զինը, որ կրնայ միայն վնաս հասցնել Հայաստանի հանրապետութեան տնտեսութեան եւ ընկերային ապահովութեան, Ցեղասպանութեան լինելութիւնը հարցականի տակ դնելն էր, ան ալ Հայաստանի Հանրապետութեան անժողովրդավար իշխանութիւններուն կողմէ : Արդեօ՞ք անձնական փառքն ու ոյժը Հայաստանի Հանրապետութեան իշխանաւորներուն համար կը գերադասեն դարեր ետք, առաջին անգամ ըլլալով եւ ժողովուրդին արեան զնով, ազատագրուած հայկական ՀՈՂը : Հայ Ազգը այլեւս դժուարութիւն ունի հանչնալու անհատներ որոնց երակներուն մէջ կը հոսի իր իսկ արիւնը եւ բայց անոնք կը մոռնան եւ կը «ծախեն» Հայ Ազգին կեսէն աւելի հաշուող Սփիւռքին հայրենիքը, Արեւմտահայաստանը, որ Հայաստանի Հանրապետութեան բազմապատիկ մակերեսը ունի : Նման ազգավնաս ու ազգադաւ արարք ինչո՞վ կարելի է բացատրել : Դրա՞մ : Աթո՞ն : Իշխելու ապահովութի՞ւն : Բայց միւնչեւ ե՞րբ : Բայց միւնչեւ ո՞ւր :

Ժամանակը հասած է որ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԱՍՏԱՆԻ ժողովուրդները որոշեն իրենց նակատագիրը : Պէտք է անոնք հանեն իրենց աչակապերը : Թող անոնք միայն վստահին իրենց բուննցքի ոյժին եւ չմոլորուին օտարի խոստումներով : Պատմութիւնը վկայ : Եթէ ուշանանք Հայաստանի Հանրապետութեան այժմու անիրաւական իշխանաւորները պիտի ծրագրեն մեր տեղը հետեւելով օտարներու խրատներուն եւ ուղղութիւններուն : Անոնց խորհուրդները կը հետապնդեն միայն իրենց շահերուն : Վերջին պատահարները կը վկայեն թէ այդ որոշումները կը վնասեն Հայոց Դատին : Արդէն վաղը կրնայ ուշ ըլլալ :

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Տեղասպանության տարելիցի նախօրէին Հայաստանի իշխանութիւնները մատուցեցին հերթական անակնկալը: Ապրիլ 22-ին Հայաստանի Եւ թուրքիոյ արտաքին գործոց նախարարները համատեղ յայտարարութեամբ մը եկան տեղեկացնելու թէ, երկու երկիրները համաձայնութեան հանգած են իրենց միջեւ յարաբերութիւններու կարգաւորման համապարփակ շրջանակի շուրջ եւ ընդունած են «ճանապարհային քարտեզ»:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը խիստ մտահոգիչ ու դատապարտելի կը գտնէ սոյն յայտարարութիւնը, ուր կը բացակային յստակ կէտեր՝ գոյացած համաձայնութեան շուրջ:

Մեզի համար հասկանալի ըլլալով հանդերձ Հայաստանի իշխանութիւններու ձգտումը՝ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու բարելաման հարցով, մենք ունինք խոր կասկածներ խնդիրի լուծման ժամանակի, ձեւաչափի եւ կերպի ընտրութեան վերաբերեալ: Թուրքիան տակաւին չէ վերացուցած Հայաստանի միակողմանի շրջափակումը, չէ ընդունած Տեղասպանութեան իրողութիւնը ու առ այսօր չէ դադարեցուցած հակա-արցախեան թշնամական գործողութիւնները:

Պատմաբաններու յանձնաժողով ստեղծելու շուրջ կատարուած յայտարարութեամբ սկսած հայկական դիւանագիտութիւնը, անցնող ամիսներուն կրեց բազմաթիւ պարտութիւններ ու ամէն քայլափոխի մատնուեցաւ ձախողութեան՝ թրքական ու ատրպէյճանական փոխհամաձայնեցուած քայլերուն դիմաց:

Անգամ մը եւս կու գանք կրկնելու թէ, Ժողովուրդի վստահութիւնը չվայելող իշխանութիւնը ի վիճակի չէ պաշտպանելու ազգի գերագոյն շահերը ու ենթակայ է տեղի տալու արտաքին ճնշումներու առջեւ: Բազմաթիւ երկիրներու ու կառոյցներու կողմէ Հայաստանի վրայ բանեցուող ճնշումներու կողքին, վերջին շրջանին արդէն իսկ զգալի է թրքական ազդեցութեան զօրացումը տարածաշրջանէն ներս, բան մը որ մեզի համար կը նկատուի ամենէն վտանգաւորը:

Մեր խորին համոզմամբ, գործընթացի նմանօրինակ շարունակութիւնը կրնայ առաջին հերթին հիասթափութիւն յառաջացնել սփիւռքահայութեան մօտ: Հայ-թրքական յարաբերութիւնները չեն կրնար քնարկուիլ ազգային ընդհանուր քաղաքականութեան շրջանակներէն դուրս ու հետեւաբար թշնամիի հետ բանակցութիւնները պետք է կատարուին բաց ու թափանցիկ, առիթ տալով համազգային քննարկումներու, ինչպէս Հայաստանի, նոյնպէս ալ սփիւռքի տարածքին:

Այս առթիւ, կոչ կ'ընենք Հայաստանի ու սփիւռքի մեր ժողովուրդին, որպէսզի իրենց ձայնը լսելի դարձնեն ու առանց վարանելու դատապարտեն այսօրուայ իշխանութիւններու նմանօրինակ ազգավնաս քայլերը:

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
Ապրիլ 23, 2009

Monsieur le Commissaire aux droits de l'homme,

Nous connaissons votre engagement personnel en matière de droits de l'homme et de démocratie, et l'intérêt particulier que vous avez porté à l'évolution de la situation en Arménie depuis l'élection présidentielle de février 2008 et les événements du 1<sup>er</sup> mars.

Nous saluons les prises de position qui ont été les vôtres, condamnant en particulier l'arrestation arbitraire de personnes détenues sur la base de leurs opinions politiques, et l'absence totale de transparence de l'enquête menée par le gouvernement arménien sur la répression sanglante du 1<sup>er</sup> mars 2008. A cet égard, les visites d'évaluation des co-rapporteurs de la Commission de suivi en Arménie, durant l'année 2008, avaient également abouti à une série de recommandations et d'exigences formulées à l'encontre des autorités arméniennes, et adoptées par l'Assemblée parlementaire du Conseil de l'Europe (Résolutions 1609 et 1620).

Nous avons été cependant très surpris des conclusions du rapport présenté par Messieurs Georges Colombier et John Prescott à la session plénière de l'APCE du 26 janvier 2009, évaluant positivement l'attitude du gouvernement arménien. Le texte de la résolution adoptée par l'APCE le 26 janvier dernier (Résolution 1643) a été indéniablement élaboré sur la base d'informations inexactes et une analyse erronée de la situation en Arménie. En effet, seules les personnes ayant reconnu leur participation à des actes de vandalisme, et condamnées à ce titre, avaient été libérées par le président arménien, paradoxalement graciées à la veille de la session. Les personnes arrêtées pour leurs seules opinions politiques étaient toujours<sup>3</sup>, quant à elles, détenues dans des établissements pénitentiaires. Des avocats eux-mêmes, défendant certains prisonniers politiques, avaient fait l'objet de poursuites judiciaires.

Certes, nous saluons aujourd'hui les amendements apportés récemment aux articles 225 et 300 du code pénal par le Parlement d'Arménie, - seule proposition émanant des autorités pour résoudre la crise-. Ces amendements n'ont cependant abouti à aucune libération de prisonniers politiques, - y compris celle des sept leaders de l'opposition-, toujours inculpés sur la base d'accusations les plus fantaisistes, reposant sur les seuls témoignages de la police. Un silence total est par ailleurs observé sur l'enquête menée sur les événements du 1<sup>er</sup> mars.

Dans ces conditions, quel crédit l'Assemblée parlementaire du Conseil de l'Europe a-t-elle pu, et peut-elle encore, attribuer aux autorités arméniennes ? On ne peut que douter de la volonté réelle du gouvernement arménien de normaliser la situation et de rétablir un Etat de droit.

Le 31 mai prochain, les Arméniens seront appelés aux urnes pour élire, pour la première fois, le maire d'Erevan. La société civile arménienne ne saura accepter à nouveau des manquements graves à la démocratie et de nouvelles fraudes électorales. A cet égard, nous souhaitons attirer votre attention sur les effets négatifs que peut revêtir l'absence de débat sur l'évolution de la situation en Arménie, lors de la session plénière de l'APCE le 27 avril.

Face à cette nouvelle échéance électorale, l'abandon des exigences du Conseil de l'Europe à l'encontre du gouvernement arménien peut avoir de graves conséquences. La population arménienne, déjà confrontée à de sérieux problèmes économiques, exacerbée par toutes sortes d'inégalités, d'injustices, de répressions, a aujourd'hui encore les yeux tournés vers l'Europe pour l'aider à intégrer les valeurs démocratiques auxquelles elle aspire. L'opposition dépasse aujourd'hui largement les partisans de l'alliance des partis politiques rassemblés au sein du Congrès national arménien dirigé par Lévon Ter Pétroussian, pour atteindre toutes les couches de la société civile arménienne qui, bien que silencieuse, condamne aujourd'hui l'absence de volonté politique du pouvoir en place à résoudre la crise, à faire toute la lumière sur les événements du 1<sup>er</sup> mars, à organiser des élections libres et transparentes.

La responsabilité de l'Europe dans la stabilité intérieure de l'Arménie ne peut être écartée. Elle n'a pas le droit à l'erreur ; elle doit être vigilante quant à ses évaluations sur le terrain, quant à la justesse de ses propos et de ses déclarations. L'Europe, qui envisage la création de nouveaux partenariats à ses frontières orientales, qui souhaite l'ouverture des frontières entre la Turquie et l'Arménie et une résolution pacifique du conflit du Haut-Karabagh, ne peut continuer à fermer les yeux sur cette crise politique, et doit être soucieuse de résoudre les questions de démocratie et de libertés dans tous les états du Sud-Caucase, s'imposant en acteur de la sécurité régionale.

Nous réaffirmons que seules la réconciliation de toutes les forces politiques et l'instauration d'un dialogue entre le gouvernement arménien et l'opposition seront le garant de la stabilité intérieure du pays, indispensable face aux enjeux politiques et géostratégiques auxquels l'Arménie est en train de faire face. Seule une Arménie démocratique, ayant su rétablir la confiance de la société civile et un consensus national, aura toute sa crédibilité sur la scène régionale et internationale.

Nous demandons instamment au Conseil de l'Europe d'œuvrer pour la mise en place d'un processus réel de démocratisation en Arménie, se traduisant immédiatement par la libération des prisonniers politiques.

Paris, le 23 avril 2009

Association "Solidarité Franco-Arménienne"  
Comité de Soutien à la Démocratie en Arménie.  
Collectif "Démocratie pour l'Arménie".  
Comité européen de défense des prisonniers politiques en Arménie.  
Parti Social-Démocrate HENTCHAKIAN

## **DATES A RETENIR :**

— 7 Յունիս 2009

Լիբանանեան Երեսփոխանական Ընտրութիւն.

Լիբանանահպատակ ֆրանսաբնակներու ուշադրութեան,

Մասնակցելու համար Լիբանանեան Երեսփոխանական ընտրութեան, որ

տեղի պիտի ունենայ Կիրակի, Յունիս 7, 2009ին, եւ այլ

մանրամասնութիւններու համար կը խնդրուի դիմել, 0612750531 թիւին :

— 7 juin 2009

### **ELECTIONS EUROPEENNES**

La participation aux votes est un devoir.

Aux urnes TOUS pour élire ceux qui nous soutiennent.

— 15 Յունիս 2009

### **ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ**

«Քսան կախադաններու» յիշատակին առթիւ դաստիարակչական երեկոյ

-Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը 1887էն մինչեւ այսօր-

Տեղերը ապահովելու համար հեռաձայնել 0612750531 թիւին :

— 21 Յունիս 2009

### **ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

Հնչակեան ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆ ՆԵՐՈՒ յիշատակին, հոգեհանգիստ,

Սուրբ Յովհաննէս Մկրտիչ Մայր Եկեղեցի - Փարիզ, Ալֆօրվիլի Սուրբ

Պօղոս-Պետրոս եւ Իսիի Սուրբ Մարիամ Աստուածածին Եկեղեցիներուն

մէջ :

### **PROCHAINEMENT**

27/05/09 : *Finale de la champions league, Sur Grand Ecran*

23 et 30/05/09 : *Multiplex championnat de France, Sur Grand Ecran*

+ autres dates ... [www.homenmen.fr](http://www.homenmen.fr)

31/05/2009 : *Tournoi de Baby-Foot  
au CJA,..... [www.homenmen.fr](http://www.homenmen.fr)*

ԴԷՊԻ ՅԱՂԹԱՆԱԿ-TEBI HAGHTANAG-LA VICTOIRE

Périodique—bulletin d'information

Խմբագրական Կազմ-REDACTION

BADEM Chaké, BADEM Kegham, BEDIK David,

HOVAKIMIAN Hovakim, SILAHLI Saro, SIRADAG Aren

TASCIOGLU Alex, SATCHLIAN Kévork

HAGHTANAG

c/o CJA, Place ACHTARAK, 2-2Bis Bd Carnot,

94140 ALFORTVILLE

Tél: 01 43 76 14 45

[www.haghtanag.fr](http://www.haghtanag.fr)